ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «2» ապրիլի 2026թ № 926-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 902-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 263-Ն որոշման 1.1-ին կետով՝

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի մարտի 29-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 130 որոշմամբ նախատեսված մաքսային ընթացակարգով ձևակերպելիս Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու պահանջը չկիրառելու մասին» N 902-Լ հրամանի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 130 որոշմամբ նախատեսված մաքսային ընթացակարգով ձևակերպելիս Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի օբյեկտ հանդիսացող արտադրանքի համար համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու պահանջը չկիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 1427 որոշման հավելվածով հաստատված ցանկի՝

ա. 1-5-րդ և 7-24-րդ կետերի համար՝ 2024 թվականի ապրիլի 1-ից,

բ. 1-5-րդ, 7-18-րդ և 20-24-րդ կետերի համար՝ 2024 թվականի մայիսի 1-ից,

գ. 1-5-րդ, 8-18-րդ և 20-24-րդ կետերի համար՝ 2024 թվականի հունիսի 1-ից,

դ. 1-4-րդ, 8-11-րդ, 13-րդ, 15-17-րդ, 20-22-րդ և 24-րդ կետերի համար՝ 2026 թվականի հուլիսի 1-ից:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2026-04-01 18:03:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ